Ի՞նչ է ԲԱԱՍ-ը

ԲԱԱՍ-ը (բնագիտական առարկաներից ազգային ստուգատես) կրթական հետազոտություն է, որի հիմնական նպատակն է պարզել հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտների ֆիզիկայի և քիմիայի դպրոցական դասընթացից ձեռք բերած գիտելիքների, հմտությունների և ունակությունների ընդհանուր մակարդակը, ինչպես նաև՝ թե որքանով են աշակերտներն ունակ ֆիզիկայի և քիմիայի գիտելիքները կիրառել կենցաղում, առօրյա և ոչ ստանդարտ իրավիճակներում:

ԲԱԱՍ 2011-ը Գնահատման և թեստավորման կենտրոնի կազմակերպած երկրորդ ազգային հետազոտությունն էր, որը նպատակ ուներ նաև պարզել աշակերտների ընդհանուր մակարդակի վրա հիմնական գործոնների ազդեցության չափը: Այդ գործոնների հայտնաբերումը կատարվել է աշակերտների կողմից լրացված հարցաշարի օգնությամբ, որից ստացված տվյալները համադրվել են առաջադիմության ցուցանիշների հետ և պարզել այս կամ այն գործոնի չափը:

Ազգային ստուգատեսի արդյունքների համադրումը $TIMSS$ միջազգային ստուգատեսի արդյունքների հետ՝ հնարավորություն կտա համեմատական վերլուծություն կատարելու ազգային ստուգատեսների և արտաքին ընթացիկ գնահատման թեստերի հետագա կատարելագործման նպատակով:

Ստուգատեսի առաջադրանքները կազմվել են այնպես, որ դրանք և՛ ձևակերպման, և՛ բովանդակության առումով գրավիչ լինեն:

2012 թ. նախատեսվում է կազմակերպել բնագիտական առարկաներից ազգային ստուգատեսի երկրորդ փուլը՝ «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաներից: